ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2022թ. № 823

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-030-0008-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,19 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1424097 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 0603055ZGBDR) և Սանասար Մնացականի Դանիելյանի (ծնված՝ 26.07.1966թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0008-0003 կադաստրային ծածկագրով 0,19 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 110,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 18 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին, 66 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին և 16,5 քառակուսի մետր մակերեսով հացատանը տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Գոգարան, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4 » հասցեն (փոստային դասիչը՝ 1809):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2022թ. № 824

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 733 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող 06-042-0031-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,01139 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, կառույցն օրինականացնելու, հողամասի հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 733 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 28
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2022թ. № 825

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ, ԾԱՂԿԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ, ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Շիրակամուտ բնակավայրի վարչական ղեկավար Միքայել Պապոյանի 2022 թվականի հուլիսի 7-ի, օգոստոսի 12-ի զեկուցագրերը, Ծաղկաբեր բնակավայրի վարչական ղեկավար Արամ Իգիթյանի հուլիսի 25-ի զեկուցագիրը, Սարամեջ բնակավայրի վարչական ղեկավար Թամարա Մինասյանի սեպտեմբերի 8-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Սերգեյ Դանիելյանի 2022 թվականի հուլիսի 4-ի թերությունների ակտը, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի օգոստոսի 5-ի թերությունների ակտը, Շիրակամուտ բնակավայրի 11-րդ փողոցի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման, Շիրակամուտ բնակավայրի ֆուտբոլի դաշտի լուսավորությունն ապահովելու, Ծաղկաբեր բնակավայրի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման, Սարամեջ բնակավայրիի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի լուսավորության, Գերմանական թաղամասի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման համար ապրանքներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 46 900 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 826

«ԲՈՒՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06801793) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Շիրակի խճուղի 156» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 827

«ԱՐՎԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԱՐՎԵՏ» ՍՊԸ-ի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՎԵՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06935437) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Երևանյան խճուղի 13» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 828

«ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66949836) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Ջրաշեն Երևանյան խճուղի 2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 40 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 829

«ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66949836) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Ջրաշեն Երևանյան խճուղի 2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 40 քառակուսի մետր մակերես) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 830

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԻՆԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՉԱԽԱԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏԳՐՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կեով, 22.1-ին կետով, հաշվի առնելով, որ Գագիկ Սուրենի Խաչատրյանին և Ալինա Վարուժանի Չախալյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող, 06-042-0011-0010 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասի վրա 1965 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան (կիսանկուղ), 1985 թվականին կառուցված բնակելի տան (կիսանկուղ), 1989 թվականին կառուցված բնակելի տան և բաց պատշգամբի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1155138 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի հաշվառման ծածկագիրը՝ 2022YW6RLL, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ

գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042DEBVEXN) և Ալինա Վարուժանի Չախալյանին ներկայացուցիչ Սուրեն Ջիվանի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գագիկ Սուրենի Խաչատրյանին (ծնված՝ 03.06.1973թ.) և Ալինա Վարուժանի Չախալյանին (ծնված՝ 03.04.1975թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող, 06-042-0011-0010 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 23 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը (կիսանկուղ), 59,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը (կիսանկուղ), 72,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 22,04 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և 37,9 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գագիկ Սուրենի Խաչատրյանի և Ալինա Վարուժանի Չախալյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

4. Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող, 06-042-0011-0010 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Լեռնավան 11-րդ փողոց, 22 բնակելի տուն» հասցեն:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ՝ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 831

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0031-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,01139 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 43.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Լեռնավան բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-042-0031-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,01139 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1992 թվականին անհայտ անձի կողմից կառուցված 67,8 քառակուսի մետր մակերեսով բուժկետի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Գեոգլոբալ» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հաշվառման չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր 2022A52YLZ) և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը՝ (քաղվածք 06042JLKNTLN) ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի 1-ին փողոցի վրա գտնվող, 06-042-0031-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,01139 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի 1-ին փողոցում գտնվող 06-042-0031-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,01139 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի 1-ին փողոցի վրա գտնվող, 06-042-0031-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,01139 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 67,8 քառակուսի մետր մակերեսով բուժկետը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնավան, 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 5 շինություն» հասցեն (փոստային դասիչ՝ 1811):

6. Սույն որոշումը 5 օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Զոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 832

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-021-0002-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,100 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 954507 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06021JNZTV2B) և Կառլեն Խաչիկի Մագոյանի (ծնված՝ 16.10.1967 թվականին) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող՝ 06-021-0002-0024 կադաստրային ծածկագրով, 0,100 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Արևաշող, 1-ին փողոց, 17-րդ փակուղի, 1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1807):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 833

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-021-0002-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,065 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 945568 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06021JVS45ER) և Կառլեն Խաչիկի Մագոյանի (ծնված՝ 16.10.1967 թվականին) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող՝ 06-021-0002-0020 կադաստրային ծածկագրով, 0,065 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Արևաշող, 1-ին փողոց, 17-րդ փակուղի, 4 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1807):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 834

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով տնտեսվար Արթուր Միքայելյանի 2022 թվականի սեպտեմբերի 10-ի, հոկտեմբերի 11-ի, հոկտեմբերի 13-ի թերությունների ակտերը, Սպիտակի համայնքապետարանի համար տնտեսական ապրանքների ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 9 540 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 835

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի 2022 թվականի հուլիսի 6-ի, հուլիսի 25-ի, սեպտեմբերի 6-ի, հոկտեմբերի 11-ի զեկուցագրերը, Սպիտակի համայնքապետարարանի աշխատակազմի տնտեսվար Սերգեյ Դանիելյանի սեպտեմբերի 6-ի, սեպտեմբերի 13-ի զեկուցագրերը Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի համար անհրաժեշտ ապրանքների ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 17 300 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 836

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-075-0139-0013 ԵՎ 06-075-0139-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 01/111.6/08702-2022 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-075-0139-0013 կադաստրային ծածկագրով այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,03194 հեկտար մակերեսով և 06-075-0139-0014 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,18389 հեկտար մակերեսով հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխել՝ ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2022թ. № 831

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0072-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,101921 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 25082022-06-0044 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 01/111.6/08657-2022 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի «8-րդ փողոց, 15-րդ նրբանցք, 15 հողամաս» հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-095-0072-0030 կադաստրային ծածկագրով 0,101921 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2022թ. № 838

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 06-006-0499-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,025494 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092019-06-0004 վկայականը և Վարդան Նորիկի Դավթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վարդան Նորիկի Դավթյանին, Արթուր Ռուբենի Հակոբյանին և Արմեն Ռուբենի Հակոբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի «Ալեք Մանուկյան փողոց, 21» հասցեում գտնվող 06-006-0499-0004 կադաստրային ծածկագրով 0,025494 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2022թ. № 839

06-006-0234-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի հունվարի 25-ի թիվ 8 որոշմամբ ճանաչվել է Սուրիկ Գարուշի Ավետիսյանի սեփականության իրավունքը 06-006-0234-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ, սակայն Սուրիկ Գարուշի Ավետիսյանի սեփականության իրավունքը պետական գրանցում չի ստացել, հողամասի փաստացի չափը կազմում է 0,07278 հեկտար, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տունը (կիսանկուղ), բնակելի տունը, բաց պատշգամբը, մառանը և պարիսպը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանք չի սպառնում քաղաքացիների կյանքին ու

առողջությանը, հիմք ընդունելով «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006WDBEVHZ) և Սուրիկ Գարուշի Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սուրիկ Գարուշի Ավետիսյանի (ծնված 06.10.1958թ.) սեփականության իրավունքը 06-006-0234-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,07278 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 102,22 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (կիսանկուղ), 14,33 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (կիսանկուղ), 95,93 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 17,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 41,6 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի, 11,53 քառակուսի մետր մակերեսով մառանի և 8,67 քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ ք., Այգեստան թաղամաս, 20 բնակելի տուն» հասցեն:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքն ու տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2022թ. № 840

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 196 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0493-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00400 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 196 որոշման մեջ ավտոտնակով զբաղեցված հողամասի չափը սխալմամբ գրվել է 36.0 քմ., սակայն նշված ավտոտնակով զբաղեցված հողամասի չափը փաստացի կազմում է 0,00400 հեկտար, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրված չափագրության հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006TQDWGEX) և Արարատ Լևոնի Լամբարյանի (ծնված՝ 12.02.1953թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Սպիտակ քաղաքի բնակիչ Արարատ Լամբարյանի հողամասի և ավտոտնակի սեփականության իրավունքը վերականգնելու մասին» թիվ 196 որոշման 1-ին կետում գրված «36.0 քմ» թիվը և բառը փոխարինել «0,00400 հա» թվով և բառով:

2. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0493-0004 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,00400 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող ավտոտնակի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել «ք. Սպիտակ, Շ. Թորոսյան փողոց, 97 ավտոտնակ» հասցեն:

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 01 » նոյեմբերի 2022թ. № 841

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆՈՒՅՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման 8-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի թիվ 034/21-3345 և 034/21-3346 գրությունները՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի գանձապետական հաշվեհամարների միջև նույն ծրագրերի շրջանակներում կատարել գումարների տեղափոխություն՝

1) «Ճանապարհային տնտեսություն (Արևաշող բնակավայրի ճանապարհի կառուցում)» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածի շրջանակներում «Արևաշող բնակավայրի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» գանձապետական կապիտալ սուբվենցիոն ծախսային 900242000876 հաշվեհամարից 396 500 ՀՀ դրամ տեղափոխել Սպիտակ համայնքի կապիտալ ծախսային 900242303023 հաշվեհամարին:

2) «Փողոցների լուսավորություն (Շիրակամուտ բնակավայրի արտաքին լուսավորություն)» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածի շրջանակներում «Շիրակամուտ բնակավայրի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում» գանձապետական կապիտալ սուբվենցիոն ծախսային 900242000959 հաշվեհամարից 746 750 ՀՀ դրամ տեղափոխել Սպիտակ համայնքի կապիտալ ծախսային 900242308022 հաշվեհամարին:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 01 » նոյեմբերի 2022թ. № 842

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման 8-րդ կետով, հաշվի առնելով, որ ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/15 պայմանագրով Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի համար ձեռք են բերվել անվտանգության տեսախցիկներ, տեսագրող սարքեր և ցանցային համակարգի կոշտ սկավառակ՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» գործառական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5129 հոդվածով նախատեսված միջոցներից 531 600 ՀՀ դրամ տեղափոխել նույն գործառական դասակարգման «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5122 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 1
ք.Սպիտակ